ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ ՀԱՅՈՑ
DIOCESE OF THE ARMENIAN CHURCH OF AMERICA, 630 SECOND AVENUE, NEW YORK, N.Y. 10016-4885 212 686-0710

*Archbishop Torkom Manoogian, Primate*

Թիւ 30175
Ապրիլ 5, 1987

Արժանաշնորհ
Տ. Բարիի Քհնյ. Մէլթնեան
Հովիւ Ս. Սահակ եւ Ս. Մեսրոպ Եկեղեցւոյ
Նախագահ ծխական խորհուրդի
Ուինվուս.

Սիրելի Տէր Բարի,

Ստացած ենք Մարտ 11, 1987 թուակիր ձեր տեղեկագիրը, որով կը հաղորդէք թէ՝ ձեր նախագահութեամբ Փետրուար 22ին գումարուած համայնքիդ ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական խորհուրդի վեց անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Այսու գիրով կը վաւերացնենք ծխական խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հաճեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական խորհուրդի նորընտիր դիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական խորհուրդի նոր կազմը, ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն կը մաղթենք յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյդ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքիդ մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ

Քլոտէթ Սարեան
Բարսեղ Սերոբեան
Զապէլ Զարմանեան
Պրուս Պէլըրտ
Լիոն Ալեանաքեան
Լուի Քարակիւլեան